Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՄԵԾ ՓԱԿԱՆՔ

ԵՒ

ԱՌԻՒԾԻ ՄԱՀ

891.99
Փ-31

1904
ՏՊԱՐԱՆ Վ. ԱՐԴԱՆԵԱՆՑԻ
ԳԱՆՁԱՍԱՆ ՓՈՂՈՑ 3
. ԹԻՖԼԻՍ

ԳԻՆՆ է 3 կոպ.

4446

891.99
Փ-31
Փրոֆեսոր Փրոֆյան
ՄԵԾ ՓԱԿԱՆՔ ԵՒ ԱՌԻԾԻ ՄԱՀԸ
Տուած 28/IX 80

891.99
Փ-31
Կգ

-6 NOV 2011

4446
1001

Վ. ՓՐՈՖԵՍՈՐ

ՄԵԾ ՓԱԿԱՆՔ

ԵՒ ԱՌԻԾԻ ՄԱՀԸ

(ԶՐՈՅՑՆԵՐ)

№ 11

ԹԻՖԼԻՍ
Տպարան Սովետ Վարդանեանցի
1904

28.08.2012
ՄԵՐ ՎԵՐ Ա.
60024

Дозв. Цензурою 29 Апрѣля, 1904 г., Тифлисѣ.

ՄԵԾ ՓԱԿԱՆՔ

Դիլիջանից մինչև Ալէքսանդրապոլ տրոյկայով գնացի. ընկեր վերցրի Պարսկաստանից եկող մի պարսիկ և որովհետև լաւ էի վարւում հետը և քաղաքավարութեամբ, նա իրան երաշխտապարտ էր զգում, իր հովանոցով ինձ արևից պաշտպանում կամ իր խօսակցութիւններով ինձ զբաղեցնում։ Ինչպէս երևում է, պատմիչ էր. լիքը բերնով էր արտասանում նախադասութիւններ կամ բառեր և պատմածի մտքի համեմատ էլ շեշտած միմիկաներ ունէր։

Չգիտեմ ինչպէս եղաւ որ նա ինձ պատմեց այդ զրոյցը. կարծեմ այդ այն ժամանակն էր, երբ ես ցանկութիւն յայտնեցի իջնել, ճանապարհից դուրս գտնւող մի հանքային ջրի մօտ գնալ. և երբ գնացինք, գտայ որ իզուր ժամանակ էինք կորցրել, որովհետև ջուրը ոչինչ բան էր։

Այդ բանից յետոյ մենք կառք նստեցինք և պարսիկը մօրուքը շփելուց յետոյ, վարդապետական ձայնով ու շեշտերով արտասանեց.

«Ցանկալի առարկան նմանում է շիրմի,

—բաց՝ բայց դռան վրայ մեծ փականք...»

Ցետոյ քիչ լռեց և աւելացրեց երազողի պէս.

—Ով Մանի, քո մտքերդ էլ քո քսան կանգունաչափ ձեռքով գծած գծերի պէս ուղիղ են...

Ու լռեց։ Ես ի հարկէ ոչինչ չհասկացայ։ Մանի առասպելական նկարչի մասին գիտէի, գիտէի նաև որ նա կարողանում էր ձեռքով քսան կանգուն երկարութիւն և մի թափով գիծ քաշել այնքան ուղիղ, որքան կլինի քանոնով գծուածը։

Բայց աֆորիզմը։

Խնդրեցի բացատրել։ Ամենայն սիրով ընդունեց խնդիրս պարսիկը և պատմեց ինձ սոյն զրոյցը։

«Նկարիչ Մանին—պատմեց նա—մեռնելուց առաջ մտքումը դրեց մի լաւ բան նկարել ու յետոյ մեռնել։

«Այդ մտքով էլ նա սկսեց ման գալ և նկարի նիւթ որոնել։ Ուզածն էր մի նոր, ցանկալի, տարօրինակ նիւթ։

«Մտաւ խոր ձորեր, պրպտեց իւրաքանչիւր խուլ անկիւն, մագլցեց լեռներն ի վեր, աչքի տակ տուաւ շատ տեսարաններ։ Բայց որովհետև շատ տեսել էր, շատ էլ զննել և ոչինչ չէր խուսափել նրա աչքերից, ուստի և չէր կարողանում գտնել մի առարկայ, որ լինէր

տարօրինակ և որ գրգռէր նրա ցանկութիւնը։

«Եւ նա տխրում էր։ Անտառի ոգին, լեռների հիւրիներն ու ծովի ձուկ-կանայք նոյն իսկ անկարող եղան նկարչին մի նիւթ տալ, մի նիւթ թելադրել։ Իզուր նա ոտքի տակ էր տալիս ամբողջ բնութիւնը. ոչինչ նոր բան, ոչինչ ցանկալի, ոչինչ յարատև, տենչալի։

«Եւ նա տխրում էր ու յուսահատւում։

Այսպէս տխրութեամբ նա թափառում էր ամեն կողմ, Ձիրազի դաշտերի ու լեռների մէջ, երբ մի օր էլ գերեզմանատուն մտաւ և այնտեղ մի շիրիմ տեսաւ։ Կանգ առաւ։

Մի մեծ շէնք էր, բարձր պատերով։ Բայց ինչ որ զարմացրեց նկարչին, դա այն ահագին խոշորութեամբ կողպէքն էր, որ դրուած կար շիրմի փակուած դռան վրայ։

Փակ դռան ճակատին էլ արաբական տառերով գրուած էր—«Մտիր այստեղ՝ եթէ կարող ես և կգտնես՝ ինչ որ փնտռում ես»։

Մեծ նկարիչը զայրացած գոչեց.

—Ո՞ր տխմարն է արդեօք գրել այս տողերը, մի՞թէ գերեզմանի մէջն է որ մարդ կարող է միայն գտնել իր փնտռածը։

Ցետոյ ծիծաղեց և աւելացրեց.

—Դա անշուշտ մի մեռնողի խօսք է. չկարողանալով ապրել, կամեցել է մահը ցանկալի դարձնել, իրան մխիթարել. անճար է եղել ու բանջար կերել։

Ասաց ու մէջքը դարձրեց հեռանալու։ Բայց յակամայից սիտքը միշտ այդ տողերին էր, այդ վերդասութեան։

Մի քանի բոպէ մտածելուց յետոյ, մի քանի քայլ մօտեցաւ դէպի մեծ կողպէքը, նայեց նրան ու ասաց.

—Զարմանալի է. նախ՝ ինչո՞ւ փակել մի շիրմի դուռ և յետոյ ինչ մտքով դնել այդ դռան վրայ մի այնպիսի մեծութեամբ կողպէք, որ միայն դնում են բանտերի կամ զանձարանների վրայ։

Եւ նա նորից վերը նայեց ու կարդաց.

—«Մտիր եթէ կարող ես և կգտնես՝ ինչ որ ուզում ես»։

—Մտնենք—մտածեց նա—գուցէ մի նոր բան կայ իսկապէս թաղնուած այն մեծ կողպէքի ետևում. թշուառութիւն կամ գիտութիւն արդեօք, թէ գանձ կամ իշխանութիւն...

Ձարժեց կողպէքը. շատ ծանր էր. վերցրեց մի մեծ քար և նրանով սկսեց ծեծել փականքը։ Հետաքրքրութիւնը այնքան սկսեց գրաւել արտիստին, որ նա ցանկութիւնից դողում էր։

Երկար չարչարուեց և երեկոյեան դէմ վերջապէս շարժուեց փականքը, յանկարծ փշրուեց մեծ կողպէքն ու շիրմի դուռը կռնգան վրայ դառնալով՝ լայնութեամբ բացուեց։

Ցած ձգեց քարը, մի քայլ արաւ. ներս մտաւ և զարմանքի մի մեծ աղաղակ արձակեց։

Դէմ ու դէմի պատը բաց էր լիովին, և այդ բացուածքից երևում էին Ձիրազի տներն ու այգիները։

Ձիրիմը միայն երեք պատ ունէր, ետևի պատը լիովին չէր էլ շինուած։ Իսկ շիրմի ներքին տեսքը ապացուցանում էր, որ այդտեղ ոտ կոխողը առաջինը նկարիչ չէր։

—Ի՞նչպէս... ինչու ուրեմն այդ այլանդակ գործողութիւնը։

Ձինել մի շէնք միայն երեք պատով, ետևի պատի տեղը բաց թողնել և ապա դռան վրայ էլ մի մեծ փականք կանգնեցնել, ինչու։

Լաւ ծաղրուեցի, ճակատը կնճռեց արտիստը—և սակայն դռան ճակատի գրուածքը չկատարուեց իսկ, որովհետև փնտռածս չեմ գտնում դոնէ։

Բայց հազիւ թէ դարձել էր, որ աչքը ընկաւ պատի վրայ քանդակուած սոյն երեք տողերին և նա կարդաց։

«Ամեն ինչ նոր է աշխարհիս վրայ, սակայն ոչինչ նոր չէ։

«Ձեռք բերելու դժուարութիւնը՝ առարկան ցանկալի է դարձնում։

«Մի անգամ ձեռք բերուած՝ նա դառնում է սովորական...»

Մանին ընկղմուեց մտածութեան մէջ. այդ տողերը խիստ ազդեցին նրա վրայ։

Գտել էր փնտռածը, բայց և չէր գտել.

որովհետև եթէ գտնէր՝ փնտռածը այդ չէր լինիլ։ Ուրեմն փնտռում էր մի այնպիսի բան, որ չպիտի գտնէր։

Հասկանում էր այժմ։

Դուրս եկաւ շիրմից, գնաց տուն, ձեռքն առաւ վրձինը և նստաւ կտաւի առաջ։

Նկարեց շիրիմը երեք պատով, եռևի բացուածքով, նկարեց դուռը և դրեց նրա վրայ խոշոր երկաթեայ փականքը։

Ցետոյ փոխանակ գրելու շիրմի վրայի խօսքերը, գրեց սոյն տողերը։

«Ցանկալի առարկան նմանում է այս շիրիմին—բաց՝ բայց դռան վրայ մեծ փականք»։

ԱՌԻԾԻ ՄԱՀԸ

Անապատի մէջ արշաւող, անտառ թունդ հանող և աղատութեան մէջ մեծացած խրոխտ առիւծը թակարդի մէջ ընկաւ։

Անտառից եկած՝ որս էր որոնում, շուրջը ահ սփռելուն համար մտովին հրճւում, երբ յանկարծ գլորւեց ընկաւ և մի ցանցի մէջ ի-րան բռնուած գտաւ։ Մի ցանց ահռելի, յարմարաբար շարժւող, կծկւող—գալարուն, որ մի բոպէի մէջ կաշկանդեց նրան, քաշեց հաւաքեց ու կծիկ դարձրեց։ Ոչ մի շարժում իսկ գործել չէր կարող. մի խումբ կոշտ կապեր—սարդի ճանկերով պարզւեցին նրան և առիւծը ընկած էր խճճւած, կապւած...

Առիւծը մռնչաց, կատաղեց, բուռն ճիգեր գործեց, ոստոստեց, կապերը կրծոտեց, որչափ ոյժ ունէր՝ գալարւեց, տանջւեց, բայց ոչ շղթան փշրեց, ոչ էլ ցանցը պատռեց...

Անտառի քաջը, կենդանիների արքան գերի էր այլևս։ Իր կեանքում երբէք կապեր չէր տեսել, արգելքի առաջ գլուխ չէր ծռել. կըտրել էր դաշտ, ձոր, անապատ անհուն. անցել էր անտառ, գետեր սրընթաց. տրորել փշրել, մագլցել լեռներ... աշխարհն ամբողջ ոտնատակ տալ, ազատ օդի մէջ ապրել անկաշկանդ, ա-

զատ էր սնել, ազատ էր ծնել և ահա այժմ կծկած, գալարած, ցանցով խճճած, գետնին պինդ գամած, անհասկանալի կապերով սեղմած, չէր էլ ըմբռնում թէ ինչ էր եղել, ինչու բանտարկուել և կամ ով էր նրան այդպէս խըղճուկ, դառն դրութեան մէջ ձգել։

Մռնչաց, ոստնեց, ժամերով ճգնեց. ապա՝ յուսահատ, աչքերը փակած, գլուխը կրծքին, բաշը իջեցրած՝ սկսեց խորհել։

Ի՞նչ էր այդ ոյժը, իր ոյժից շատ բարձր, այդքան խորամանկ և այդքան ճարպիկ, ումն էր ահռելի այդ չանթող ձեռքը, որ աներևոյթ՝ պարզած դէպի նա, անտառի հերոսից կծիկ էր շինել ու անշարժ, գերի՝ դաշտի մէջ գամել։

Եւ նա վեր նայեց։ Մի թեթև ու թոյլ խշրտուք լսեց, ապա իր ցանցից մի քայլ հեռուում մի մարդ նշմարեց։ Մարդն էր այն չնչին արարածը, որից տանեակներ նա պատառոտել բզկտել էր յաճախ և որն այժմ այնտեղ, ցանցի կապը ձեռին, նայում էր խրոխտ որսին, նայում հրճուանօք, ծաղրում արքային, ծաղրում հսկային...

Ելաւ, ուզեց ոստնել, յանդուգն ծաղրողին մի պատառ շինել, փշրել, տրորել... բայց մարդը կապը ձգեց և ցանցը կուշ եկաւ, աւելի սեղմեց ու առիւծի ջանքերն ի դերև հանեց...

Օ՛հ, ինչ անկում, ինչպիսի՜ վիճակ։ Խաղալի՞ք լինել մարդի ձեռքի մէջ, ենթարկուել ծաղրի. հեռու անտառից, խլուած անապատից,

ազատ վայրերից, ստորացուցիչ կապերի մատնուած, անյոյս ու գերի...

Եւ առիւծը դառնացած՝ լացաւ աղիողորմ։ Ու նրա լացից անտառը դողաց, ժայռերը հնչեցին, դաշտը թունդ եկաւ...

Օրերով մնաց առիւծը ցանցի մէջ. նրան կեր տուին. բայց ոչինչ բերանը չ'առաւ. նրան չըջապատեցին. բայց նա լուռ մնաց, լուռ և յուսահատ, մահուան ցանկացող...

Մի օր էլ մի մեծ վանդակ բերին դաւաճան ցանցի կողքին, յետոյ առիւծին սոսկացին ելնել. ցանցը լայնացրին, շիկացած երկաթներով հղօրին առաջ մղեցին և նկուն դարձրած՝ վանդակի մէջ առին։

Այժմ կապ չկար, բայց երկաթէ ամուր ձողերով կազմած չորս բարձր պատեր։

Առիւծը փորձեց բացուածքների միջով նեղնալ՝ դուրս սահել, գլուխը դէմ տաւ, հրսկայ ոստիւններով ձողն ի վեր թռաւ, կատաղի քայլերով վանդակի մէջ վազվզեց, հնարք որոնեց, դրսում երևցող ազատ երկնքին կանչեց, ազատ տարածութիւնը տենչաց, ապա ամբողջ վանդակը ցնցեց, դղրդացրեց... Բայց տեսաւ որ զուր էր, ամեն ջանք ունայն և որ գերի էր, բռնուած, կաշկանդուած...

Տխուր ու արտում նստեց վանդակի ձողերի առաջ, ոտները ծալեց, պոչը հաւաքեց, գլուխը թաթերի վրայ առաւ և աչքերն ան-

յաղ տենչանքով լիքը, սկսեց հեռու՝ իր անապատին, իր գոռ անտառին, ուր երէկ դեռ ևս հպարտ ուխտիստ՝ անցնում էր ազատ, ուր երէկ դեռ ևս իր լայն թոքերով շնչում էր, փռնչում...

Ահա այն ժայռը, այն մեծ լերկ քարը, որի կատարին կանգնել էր ժամերով, արևի տակ հանգչել, հեռուները դիտել, իր սուր աչքերով որսեր որոնել և արհամարհոտ՝ ոտքերի մօտից սահող մողէսները զննել, դեռուների փոքրութիւնը ծաղրել...

Ա՛հ, ոչքա՛ն կուզենար այժմ այդ մողէսների պէս փոքր լինել, սահել վանդակի ձողերի միջով, գնալ ապրել միշտ խուլ խոռոչներում, աւազների մէջ, շնչին բան դառնալ, առիւծ չլինել, միայն թէ ազատ. ազա՛տ կապերից, վանդակից. բնութեան ծոցում ուզած տեղն ապրել, ուզած տեղը մեռնել..

Վերջապէս մի օր վանդակը շարժեցին, օրերով՝ գլորած տարան, յետոյ ինչ որ երեքուն տախտակի վրայ ամրացրին և մեծ ջրի վրայ լողացնելով՝ տարան բազմամարդ երկիր հանեցին:

Առիւծը այդ բոլորը տեսաւ զարմացած: Ծովի ալիքների, կապոյտ տարածութեան առաջ զմայլած մնաց — իր անապատը կարծեց. յետոյ վանդակի շուրջը ժողովւող ժխորին նայեց քամահրանօք. իմացաւ որ մտցրել էին ի-

րան մի անծանօթ տեղ, ուր ոչ անտառ կար և ոչ անապատ. ուր հորիզոնն իսկ վանդակի էր նմանում—փակուած, կարճ, սեղմուած, և օդը ճնշող, թանձր, հեղձուցիչ:

Զշմած, մեքենայաբար կերաւ ինչ տուին, արեց՝ ինչ ուզեցին: Է՞լ չմռնչաց, էլ չկատաղեց, միայն կծկուած վանդակի մի անկիւնում՝ անշարժ ժամերով, միտքն իր անապատին, երազը՝ անտառին, լայնարձակ օդին՝ դառն հեկեկանքով լացաւ ու մեռնել ուզեց...

Այդպէս նրան տարան, շրջեցրին քաղաքներ, նորից ջրեր անցկացրին, նորից մռայլ. խեղդիչ երկիրներ և վերջի վերջոյ մի անտառանման այգու մէջ մտցրին. վանդակը բարձրացրին, ստիպեցին նրան անցնել մի ուրիշ աւելի մեծ ու կլոր շրջանակի մէջ, դուռը փակեցին, մի կտոր միս էլ ներս ձգեցին և թողեցին հեռացան...

Առիւծն այժմ գաղանանոցումն էր:

Ի ցոյց էր դրուած մի մեծ ու կլոր բարձրը վանդակում, ուր մինչև իսկ, կարծես նրան ծաղրելու համար, փոքրիկ քարերից՝ շնչին, խաղալիքի նմանող մի ժայռ էին կազմել, մօտն էլ սիւնի պէս կերտուած, ցանցառ տերևներով, մանրիկ ճիւղերով ճղճիմ ծառ տնկել, ծառի տակը՝ ջրի աւազան, վանդակի յատակի վրայ՝ ծովի չոր աւազ...

Առիւծը շուրջը նայեց, զզւանքով տեսաւ

իր աղատ հայրենիքը ծաղրող ծառն ու ժայռը, պոչով փշրեց առաջինը. ոտքով կոտրտեց երկրորդը և դուրս նայեց։ Դիմացը՝ պատեր, հեռուն՝ ուրիշ վանդակներ էլ. ապա մռայլ ծառեր և նրանց տակը պտտող գծուծ նայողներ, որոնք երբեմն մօտ էին գալիս, բերանը բաց՝ դիտում և կամ ահարեկ՝ ետ ետ էին քաշւում...

Եւ յանկարծ այդ բոլորի մէջ լսւեց մի ծանօթ և խռպոտ մռնչիւն, որ լուտանքով գոչում էր.

—Ողջոյն անկեալ վեհափառութեան...

Դարձաւ։ Դրանից տասը քայլ հեռու, նոյնպէս վանդակում, ձողերի միջից գլուխն երերցնելով, չարամիտ վագրը աչքերն հեգնութեամբ լի՝ իրան էր նայում և երբ նրանց ակնարկները միմեանց հանդիպեցին, արիւնարբու գազանը օռնաց ու ասաց.

—Ողջոյն, անապատի հզօր դու արքայ, գոռ անտառների, ադատ ժայռերի մեծդ դու հսկայ, եկել ես մեզ ընկեր—մեզ՝ չնչիններիս, մեզ ստորներիս բախտակից եղել... Ողջոյն, ուրեմն, անկեալդ վեհափառութիւն...

Ապա մի մեծ քրքիջ, չարախնդաց, դիւային ծիծաղ լսւեց նրա վանդակից, յետոյ քրքիջն անցաւ մի երրորդ վանդակ, որտեղից ինձը ատամները բացած, փայլուն աչքերով՝ նայում էր հեգնութեամբ... Եւ այդպէս, մէկէն քրքիջը քայլեց, վանդակից վանդակ մտաւ և «ի բոպէի մէջ առիւծն իրան գտաւ շրջապատ-

ւած՝ չնչին անասունների, գերի գազանների, գայլի և նոյն իսկ կապիկների՝ ծաղրով ու հեգնութիւններով։

—Ա՛հ, արքայ, խոնարհ մեր ողջոյն, կանչում էր ինձը։

—Ողորմած եղիր, հզօր թագաւոր, որ համարձակւում ենք քեզ ընկեր լինել. օռնում էր գայլը։

—Մենք կապիկներս քեզնից հզօր ենք, ճչում էին անճոռնիները—որովհետև ուրախ ենք և կատակում ենք...

Ու ծաղր, հեգնութիւն, քրքիջ, աղաղակ ամեն կողմից երկար տեղացին բռնւած հզօրի անպաշտպան գլխին ..

Առիւծը մռնչաց, ոստնեց դէպի ձողերը, ուզեց դուրս ելնել, տրորել—ջարդել այդ հեգնողներին... բայց բաղխւեց ձողերի, գազանապահի հրաշէկ երկաթը այրեց նրա թաթը և նա նկուն, կատաղի՝ գլուխը թաթերի մէջ առաւ և ուզեց մեռնել...

Դառն էր այդ բոլորը, դառն, անտանելի։ Մեռնելը խիստ լաւ էր։ Կուզենար տեսնել իր արեան կաթիլ առ կաթիլ քամւելը, իր անդամների կտոր առ կտոր բզկտւելը, կուզենար թաթերը փշրել ձողերի վրայ, սիրտը յօշոտել, կորզել դուրս ձգել...

Գիշերն էլ եկաւ մռայլ ու խոնաւ։ Ծաղրը ու քրքիջը սաստկացաւ, մեծացաւ.

—Ա՛հ, մեռնելուց վախենում ես, գոչում

էր վագրը—վանդակի մէջ ես, վառաւոր արքայ...

—Ա՛հ, դու թշուառ ես, առիւծ ահալից, մլաւում էր ինձը...

—Թքել, թքել առիւծի վրայ. ճչում էին կապիկները. .

Առիւծը գլուխը կռացրեց, քաշեց քարերի ետեը, աշխատեց մթութեան մէջ ընկղմել, ծածկուել և այդ ծաղրող ձայները չլսել:

Ո՛չ, պէտք էր դուրս գնալ. ինչ որ էլ լինէր, մեռնէր կամ ապրէր—պէտք էր դուրս ելնել, ոտքի տակ տալ, տրորել ամեն բան, ամեն արարած, միայն մի բոպէ, մի վայրկեան ազատութեան մէջ լինել, այնտեղ էլ մեռնել...

Եւ նա մօտեցաւ վանդակի դռան, խուլ մռնչիւններով քաշեց ձողերը, ցնցեց ամեն բան ու գերբնական մի ոյժով, յուսահատ ճիգով փշրեց դռան շղթան ու դուրս թռաւ իր դիմացը բռնուած հրաշէկ երկաթի վրայ ..

Գազանապահն էր այն, մի սպառնալից, կրակած ձողակով՝ որ մօտենում էր նրան և հնչեղ ձայնով ներս հրաւիրում...

Առիւծը ժողովեց իրան, յետոյ ոստնեց:

—Մեռնե՛լ ազատ... գոչեց նա. և երկաթը վժժալով նրա կուրծքը մտաւ:

Առիւծը գալարուեց, երկնքին նայեց, անապատը երազեց, անտառին հառաչեց և հրաշէկ երկաթը կրծքին, աչքերն ազատութեան, մեռաւ քաջի պէս, բայց, ազատ օդում, ազատ երկնքի տակ..:

ՀՀ Ազգային գրադարան
NL0378143

60024.

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. ԹԱԹԱԽՄԱՆ ԳԻՇԵՐԸ, Լէօի, գինը 5 կ.
2. 26 ՏՂԱՄԱՐԴԵԻ 1 ԱՂՋԻԿ, Մակսիմ Գօր'կիյի, թարգ. Մուշէ վ. 5 կ.
3. ԽՆԹԸ և ուրիշ պատմուածքներ, Վ. Փափազեանի . . . 10 կ.
4. ԿԵԱՆՔԻ ԴԱՍԸ, պատմուածք Ա. Ակարոնեանի . . . . . 5 կ.
5. ՍԳԻՏԱԿ ԾԱՂԻԿԸ, Է. Օժէշկօի, թարգ. Զահվերդեանի . . . . 5 կ.
6. ԱՐՏԻՍՏԸ, Զիրվանզադէի . . . 15 կ.
7. ԵՂՕՒ ՔՈՌ ԲԱԽՏԸ, Զահրիաբի 3 կ.
8. ԵԱՊՕՆԻԱ, Խաչատրեանի . . . 3 կ.
9. ԴԱՆԿՕԻ ՍԻՐՏԸ, Մակսիմ Գօր'կիյի, թարգ. Ա. Աթայեանի . 3 կ
10. ԻՄ ՈՒՂԵԿԻՑԸ, Մակսիմ Գօր'կիյի, թարգ. Ա. Աթայեանի . . . . 10 կ
11. ՄԵԾ ՓԱԿԱՆՔ և ԱՌԻԻԾԻ ՄԱՀԸ Վ. Փափազեանի . . . . . 3 կ